

Պ. Ս. Ս. Ն. Բ.

Հ. Ս. Ս. Լ.

ՊՈՒԼՏԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Երկու քիւր մեկ ծրարով

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.


ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ՎԱՆՔԻԻ

ԵՐԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՍԵՒ.



Լ. Ր. Ս. Կ. Ի. Բ.

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՅՈՒԹ ԿՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԻԻ ԴԱԲԱԹ

rev. Père G. Kalemkarian
Missionnaire de la
Société des Missions
Étrangères de Paris
Vienne ARNA

Редакция

на вѣстникѣ

«Врастник»

КАРНА


Գրութիւնք հոռ չեն
տրուիր

ՇԵՆՈՐՀԱՅԱԼԻՔ

Վառնայի Աղքատախնամ Ընկերութեան վարչութիւնն աղքատներու, թշուառներու եւ անկողնոյ մէջ հիւանդ տառապողներու կողմանէ իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ յարգամեծար Տիար Սարգիս Գուլամեանի որ ըստ իր բարի սովորութեան ինքնաբերաբար նուիրած է ընկերութեան 100 Ֆրանք:

Կնիք Գործ. Ժողովոյ

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԸ



«Ազգ» թիւ 19-ում հրատարակուած պ. Արծրունու յօդուածը կարգացող տրամաբանօրէն գալիս է այն եզրակացութեան թէ՛ Հնչակեան կուսակցութեան մէջ սկզբից իվեր տեղի ունեցած բաժանումներն ու պառակտումներն արդիւնք են եղել իբրեւ թէ անձնական նեղ հաշիւների եւ փառամոլական ձգտումների մի յարտարարութիւն, որ եթէ ուղիղ եղած լինէր, չատ տխուր գաղափար կազմել պիտի տար Հնչակեան կուսակցութեան մասին ընդհանրապէս: Մինչդեռ իրողութիւնը իր ժամանակին ցոյց է տուել թէ փառամոլական ձրգտումներից, նախաթոռ բաղմելու ունայն տենչից, կենտրոնի կազմութեան դէմ առաջ եկած տրդտունչներից աւելի հայեացքների եւ տակտիկայի մեծ տարբերութիւնն էր գլխաւոր պատճառ, որ Հնչակեանների մէջ առաջ եկաւ նախկին բաժանումը:

Անունների նմանութիւնը չէ, որ մարդիկներ իրար պիտի միացնէ ու եղբայրացնէ: այլ մտքի ու սրտի Արդ. քննենք եւ տեսնենք թէ Հնչակեան երկու հատուածները միեւնոյն անունը կրելով միասին, միեւնոյն միտքը եւ միեւնոյն հայեացքն էլ ունին:

Վերակադմեալ Հնչակեանները հաւատարիմ իրենց գաւանանքին, պնդում են որ իրենց կուսակցութիւնը նպատակ ունի միայն ու միայն զբաղուելու տաճկահայկական խնդրով, գործելով զուտ ազգայնական ուղղութեամբ:

Նոցա համար գոյութիւն չունին կովկասեան դատը եւ դատակարգային կռիւը: Նոքա չեն ցրում իրենց ոյժերը երկու պետութեանց դէմ եւ կռիւ մղելով մէկի գէմ ազգայնական եւ միւսի դէմ սօսիալական ուղղութեամբ: Մինչդեռ Հին Հնչակեանները իրենց նպատակակետ ընդունելով սօսիալիզմի տիրապետութիւնը, ճանկահայկական հարցը ծառայեցնում են իբրեւ մի միջոց (ինչպէս իրենք սիրում են անուանել այդ մօտաւոր նպատակ) իրենց իսկական նպատակի գործադրութեան համար: Սօսիալիզմի դաւանութիւնն է, որ իրաւունք է տալիս նրանց միանալու կովկասի սօսիալիստների հետ կռիւ մղելու Զարիզմի դէմ, եւ միանգամայն վարելու դատակարգային կռիւ: Ահա մի գաւանանք, որ բոլորովին համաձայն է Հ. Յ. Դաշնակցութեան գաւանանքին:

Ուրեմն պայք երեւում է, որ այնչափ էլ նեղ չէ այն վիճը, որ բաժանել է միմեանցից Հնչակեան երկու հատուածներին: Տրամագծօրէն երկու հակառակ ծայրերը որչափ էլ ուղենան չեն կարող իրար հետ միանալ: Մէկի նպատակը միւսի միջոցն է, մէկի նշովածը միւսը պաշտում է. ուրեմն ինչպէս պիտի կարողանան միանալ նոքա իրար հետ եւ ծառայել մի նպատակի:

Գեւեւ հստակ ցամաքել Լօնտօնի եւ Օտէսայի փողոցներում թափուած հայկական արեան հետքերը, որոնք արդիւնք էին այդ քաղցրահնչիւն բայց անբնական կամ պայմանաւորեալ միութեան:

Այդպիսի կոչ արողները միթէ չեն կարգացել Գոթիզմի այն առակը թէ տարբեր ձգտում ունեցող կենդանիներից լծուած կառքը մինչեւ այսօր էլ իւր տեղն է մնացել:

Արդ խորհուրդ ենք տալիս Հնչակեան սրտացաւ բարեկամներին, որ իրենց երկու հատուածների իսկական միութեան համար համաձայնութեան փոխարէն համամտութիւն ընտրեն իրենց քարոզութեան նիւթը եւ

այնժամանակ պիտի տեսնեն որ իրենց այս քարոզը չատ օգտակար պիտի լինի:

Մի այլ անգամուայ եւ թողնում գրել թէ հայոց մէջ ներկայումս գոյութիւն ունեցող ո՞ր կուսակցութիւններ կարող են եւ պարտաւոր միանալ միմեանց հետ:

ՎՏԱՐԱՆԴԻ

1907 Սեպտ. 4

Վ ա ո Ն ա

ՄԵՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐԸ

Պուրկազ, 2 Սեպտ.

Ընթերցարան-Գրադարաններ որոնք յաճախ անուր կը բազմապատուին մեր մէջ, հետաքրքրական է գիտնալ թէ անոնք կը պահեն իրենց բարձր կոչումը:

Մենք գիտնալով սակայն ընթերցարանի օգտակարութիւնը՝ որուն նպատակն է ծաղկեցնել ընթերցասիրութիւնը, զարկ տալ մոլորիչ գիտակցութեան, լսարաններու միջոցով վիճարանութեամբ լրծել բոլոր հրատապ հարցերը եւ այլն: սակայն կը հարցնենք կրկին թէ՛ արդեօք մեր ընթերցարանները հաւատարիմ են իրենց ընդգրկած ծրագրի նպատակին:

Եթէ մենք սեւեռելու ըլլաւք մեր աչքերը դէպի մի քիչ անդին—Տաճկաստան ու մայրաքաղաքէն սկսեալ մինչեւ հայաշատ բայց խուլ անկրկնները նոյնիսկ պիտի տեսնենք որ այդպիսի հաստատութիւնները մեր մէջ հոն ալ գոյութիւն ունենալէ յետոյ, չատ գերիվեր է, եւ ինչ որ գիտելի է—տաճիկ բռնակալ եւ կաշկանդող ուժի մի տակ նոյնիսկ, անոնք պահած են ընթերցարանի բարոյականը եւ դաշն գործնականի մէջ չատ արդիւնաւոր ու օգտաւէտ կրնեն:

Իսկ ինչ բարոյական բարձրութեան վրայ կը կենան մեր արտասահմանեան ընթերցարանները, որոնց յառաջածան համար ազատ հող կայ—Ո՛հ ափսոս իրենց այս ազատութեան, որուն յարգը չի գիտնալէ յետոյ, ընթերցարանին անունն ու նպատակն ալ չարաչար կը դործածեն, զայն վերածելով խաղարաններու, զբօսատեղիներու: Փակագծի մէջ ըսենք որ՝ բացառութիւններ յարգելի են անշուշտ:

Այսօր տասնէ աւելի ընթերցարաններ ունինք Պուլկարի մէջ, որոնց մեծագոյն մասը դժբաղդաբար զուրկ են իրենց կոչումէն, այդ կարգին պատ-

կանող, նոյնիսկ նման չը տեսնուած ընթերցարան մը ցաւ ի սիրտ ստիպուած եմ հոս պատկերացնել՝ հաստատելու համար վերը քառանկար Բաղաքի մէջ 3—4 ամիսէ ի վեր է որ Դաշնակցական հայրենակիցներու կողմէ բացուած է «Հրայր-Վահան» անունով ընթերցարան մը: Մենք ոչ թէ պիտի դատապարտենք թէ ինչու բացած են, քանի որ արդէն Պուրկազի մէջ գոյութիւն ունի 4 տարիէ ի վեր «Արաբատ» ընթերցարանը, այլ պիտի պատարակենք, անոր համար որ՝ ընթերցարան ըլլալէ շատ հետո՛ւ է, պիտի անպատեւեք անոր համար որ՝ փոխանակ ընթերցարան ըլլալու, եղած է խաղարան մը:

Մենք մինչեւ այսօր հասարակութեան աչքին չերեցուցինք, մատնանիչ չըրինք, յուսալով որ՝ մեր կողմնակի գրողները իրենց օգուտը կուրենան, բայց նկատելով որ՝ տակաւին կը շարունակուի այդ անպատուարեր ընթացքը, պարտք համարեցինք հրապարակ հանելու եւ զգուշացնելու ժողովրդեան, որ ո՛չ մէկ քաջալերութիւն ցոյց տայ: Կերեւի թէ մեր դաշնակցական պարոնները ընթերցարան ըսելով տարբեր տեղ կը հասկնան, բայց մենք երկար կանգ չի պիտի առնենք այդ մասին, եւ պիտի բաւականանանք մատնանիչ ընելով միմիայն պուլկարաց ընթերցարանը, ինչպէս նաեւ հայկական «Արարատ» ընթերցարանը, որպէսզի միանգամ ընդ միշտ վերջ տան այդ զգուշիւ ընթացքին: որովհետեւ հոգ չէ թէ մենք հայրս իրարու գործերէն կը հասկնանք, սակայն անդին օտարը ինչ կըսէ, ինչ անուն կուտայ մեզ, եթէ տեսնելու լինի որ փոխանակ թերթերու զանազանութեան եւ գրքերու ճոխութեան, հոն խաղաթղթերու կոյտ մը եւ 3—4 նարտեր եւ այլ խել մը առտրկաներ: կամ Սակայն սա՛ ալ դաշնակցական ճշմարտութիւն մ'է թէ՛ դաշնակցական 2—3 թերթ միթէ բաւականութիւն չը տար ընթերցաւէր հասարակութեան, անտարակոյս այդ՝ եւ բաւական է որ անոր շուրջն ալ մի քանի դաշնակցական պրօչիւրներ գտնուին, ալ անկից աւելին ինչ պէտք կայ ընթերցարանի մը: սակայն զարմանալին ո՞րն է որ—այդ մի քանի թերթերու եւ գրքերու վրայ նոյն իսկ նարտերն են որ կը բաղմին իրենց երկու մեծ թերթով, որոնց երկու ծայրերը դաշնակցական պարոններ նստած «տիւ չէշ» նետել կը փորձեն...:

Եւ ինչ ծիծաղելի բան որ, այսպիսի հաստատութեան մը համար պարոն Արարատեան կոչ բրաւ մեզ, աշակցելու եւ յառաջանելու որպէս ազգային տուն, ազգային կրթական հաստատու-

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Ռուսոյսի Աղիւս. Ընկերութեան

1907 Օգոստոս 12 Թուսմուդի

Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ տօնա-
խմբութեան առթիւ եղած մատաղի

ՄՈՒՏԲ

Յր. Սնդ.

Բարեպաշտ Ազգայիններէ զրկուած 18
ոչխար նուէր

Թուսմուդի հայ հասարակութենէն հա-
ւաքուած դրամ 540.85

Վերսնէն զրկուած 48.50

Բլէյնայէն հաւաքուած 23.—

Ճուրծովայէն հաւաքուած 35.50

Մարտուած երկու եզի մարմինէն
եւ իւրերէն գոյացած 127.65

775.50

Ե Լ Բ

Յր. Սնդ.

Մատաղի համար 2 եզ 370.—

390 հաց (փութ) 35.—

Մատաղի վերաբերեալ զանա-
զան ծախքեր 103.50

509.50

զուտ հասոյթ 266.—

Ընկերութիւնս յանուն հայ ազգատ-
ներու եւ խղճեցու կուգայ հրապա-
րակաւ իր խորին շնորհակտիքը յայտ-
նել ամեն անոնց որք մասնակցած են
սոյն բարեկամական ձեռնարկին:

Ի դիմաց Թուսմուդի Աղիւստ.
ընկերութեան վարչութեան
(Կնիք)

ՍՅԼ ԵՒ ԱՅԻ Ք



Սննեակի մը նոր քուած (պատանա)
պատեմէն կերի հոտը անհետացնելու
համար պէտք է կրակարանին մէջ փայ-
տածուի շնորհաբերուած կրակ գնել
եւ զուտը լաւ մը գոցել: Կրակին հու-
րին անցնելուն պէս, ժամ մը չափ
բաց ձգելու է պատուհանները:



Թրանսպարանի ոսկիի հանքերը այս
տարուոյ ոգոստոս ամսոյն մէջ
2,357,602 անգլ. լիւրայի արժողու-
թեամբ ոսկի արտադրած են: Այս աս-
տիճան անաս արտադրութիւն չէր
տեսնուած ցարդ: Կը յուսացուի որ



ուան ուղին ու ցերեկուան գիշերն. ա-
նիկա գիտէր գիշերուան ուղին ու ցե-
րեկուան գիշերը. անիկա գիտէր Բոյր-
տերու բնակավայրերը գիտէր անոնց
լեզուն, գիտէր անոնց բարքեր եւ կը
ճանչնար Շէյխը, կը ճանչնար պէկը:

— Օհ, զաւակներս, ըսաւ Աւաղա-
կապետը վեհ ձայնով մը, կը տեսնէ՞ք
այս հրացանը. շատ ժամանակ է որ
ուսերու վրայ չէի տեսնէր զայն: Անի-
կա պաշտելի անոնց համար որ կը
ճանչնան պատիւն ու Ազգատուութեան
նուիրական գաղտնիքը: Ձեր յոյսը
թո՛ղ Աստուծոյ ու անոր վրայ ըլլա՛ւ...
Բաւական է օտարութիւնը ձեզի. անց-
նի՛նք ազատ լեռներու մէջ. անցնի՛նք
Հայրենեաց աւերակներէն. անցնի՛նք
մարտերոսներու արիւնով շաղկապած
դաշտերէն... Հո՛ն մեր սրտին հետ
խօսող յիշատակներ կան, ձայներ կան,
վրժներ կան... Գիտցէ՛ք թէ մար-
դուս անձնուիրութիւնը շատ բան
կրնայ ընել:

Այս խրատներն իսկ խօսքերը վերա-
ցուց: Ու գիշեր մը խուսման ատեմ


տարեկան մինչեւ երեսուն միլիոն անգլ.
ոսկւոյ բարձրանայ:



Հոռոյ Եկեղեցին հրեայ մը երա-
նելեաց կարգը կը դադարէ: Այդ հրեան,
որ քրիստոնէութիւնը ընդունած է,
Յրանսուա-Մարի-Բու-Լիպէրման կը
կոչուի եւ «Մարիամու Անարատ Սիր-
տըն» անուն միաբանութիւնը հիմնած
է: Վատիկանի ծրարական ժողովը դիւ-
ցազնական կը նկատէ Լիպէրմանի ա-
ռաքնութիւնները. բայց ժողովը տա-
կաւին պիտի լսէ սատանային փաստա-
բանը: Այս փաստաբանը մեղմացուցիչ
պարագաներ նկատի առնել չը սիրեր:



Թարնովքա անուն դեղանի կոմ-
սուհի մը կոմս Բամարովքի սերունդ
գերած ու հետը նշանուած ըլլալով,
յաջողած է զանի համոզել որ կէս մի-
լիոն ֆր. կեսնքի ապահովութիւն մը
իրեն ի նպաստ կնքէ: Կոմսուհին իր
այս փափաքին գոհացում գտնելէ յե-
տոյ կորոչէ իրեն աւելի հաճելի սերա-
հարի մը հետ վայելելի այդ կէս միլի-
ոնը, որուն տիրանալու համար նշա-
նածին մեծնել հարկաւոր էր: Ուստի
կոմսուհին սիրահարներէ մին Նաու-
մով Վենետիկի մէջ դադարեցնէ սի-
րուհիին հետ տեսակցելէ վերջ, անոր
բնակած պանդոկը կերթայ եւ սպա-
սուհիին միջոցաւ իր սենեակը կը կան-
չէ կոմսուհին նշանածը, կոմս Բամա-
րովքին, որ սենեակ մտածին պէս
գնդակահար կըլլայ Նաումովի կողմէ:
Ինչո՞ւ այս բանը ըրին, կը գոչէ Վե-
րաւոր կոմսը.— Վաճառք չեմ ուզեր որ
Թարնովքա կոմսուհին կնութեան առ-
նես: — Ուրիշ կերպով չէի՞ր կրնար
վրժեղ լուծել գիտես թէ 8 տարու
զաւակ մը ունիմ որ արդէն զրկուած է
իր մօրմէն: Նաումով զգածուելով այս
խօսքերէն կ'սկսի արտասուել եւ ատըր-
ճանակը իր ճակտին կը քաշէ. բայց
պարսպ էր արդէն: Նաումով կը ձեռ-
բակաւոր, կոմսը կը մեռնի. Ուստի
կանական քննութիւնները կը հասա-
տեն թէ կոմսուհին Նաումովը իբր մի-
ջոց գործածած էր այդ ոճրին գոր-
ծադրութեան իր բուն նպատակն էր
ուրիշի մը հետ վայելել այդ հարստու-
թիւնը. այդ ուրիշն էր Ձայկէր ա-
նունով փաստաբան մը, որ նաեւ ձեռ-
բակաւորեցաւ Վիեննայի մէջ:



ուզողակի վանայ նահանգը մտաւ:
Աւաղակապետը վանայ ծովին եր-
կայնքը շրջապատող լեռներու մէջ ա-
պառտանարան մը գտաւ, որ Նարեկայ
վանքէն շատ քիչ հեռաւորութիւն ու-
նէր: Այդ լեռները, այդ գեղեցիկ դաշ-
տավայրերը, այդ ընդարձակ գետինը,
մէկ խօսքով այդ Ռչտունեաց ամբողջ
գաւառը կը պատկանէր հոգեկաւոր
Շէյխ Ճէլլալէտինին, որ տարիներ ա-
ռաջ սատկած էր ու որդիներ կը մնա-
յին անոր ժառանգորդը:

(Շարունակելի)



ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ կաթողիկոսին և Պոլ-
սոյ Պատրիարքարանին միջև ե-
կեղեցական իրաւասութեան եւ
քաղաքական կամ ազգային յա-
րաբերութեանց մասին անհա-
մաձայնութիւններ ծագած են:
Տ. Սահակ Կաթողիկոս կարգ մը
առաջարկներ ու պահանջներ
ներկայացուցած է պաշտօնագը-
րով մը: Պատրիարքարանը հար-
կադրուած է խնդիրը լուրջ կեր-
պով նկատողութեան առնել: Որ-
պէս զի հանգուցեալ Բէյֆուզեան
Մկրտիչ կաթողիկոսի օրով տեղի
ունեցած անհաճոյ և ազգամիաս-
դէպքերը չը կրկնուին:

— Պատրիարքարանի մէջ ցա-
ւօք սրտի կարգացիւք Կ. Բա-
րաղամեանի վաղաժամ մահը:
Հանգուցեալը ջերմեռանդ յեղա-
փոխական մը և զոհողութիւննե-
րէ չի փախչող Հնչակեան մըն
էր: Մեր ցաւակցութիւնը Բա-
րաղամեան ընտանիքին:

— Կարսի մէջ մեծ հրդեհ մը
ծագելով, ի մէջ այլոց այրած են
հայ եկեղեցւոյ կալուածները, ու-
րոնց միասը կը հասնի 150,000
ֆրանքի: Կը հաւաստուի թէ այդ
կալուածներու մեծագոյն մասը
ապահովագրուած ըլլայ:

— Պատրիարքարանի մէջ կը
քաղենք սա տողերը:

Այնպէս կը յայտարարուի որ
Մշեցի Գրասար քահանայ սպան-
նողները՝ Սարգիս Էրմօյեան, ձան-
Մուրատեան և Փօլ Սարգիսեան,
Վառնայի մէջ (Պուլկարիա) կը
գտնուին: Սպաննուած քահանա-
յին հարստութիւնը 6 հազար տա-
լէր կը հաշուուի: Գէորգ Բիւրք-
ճեան եղբայրացիք տուած է, որ
կասկածելիներէն երկուքին Մար-
սիլիա հանդիպած է, որոնք Վառ-
նա կերթային և անոնց հասցէն է
523 Պալլադ պաղար:



ՎԱՌՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆԱՄԸ



Գործադիր ժողովը շնորհակալու-
թեամբ ստացած է հետեւեալներն:
Ամուսնութեան առթիւ Տեարք Սիւն
Պոյաճեան 2 ֆր. Եղիա Համբարեան
2 ֆր.

Անուան առթիւ՝ Տիկին Մարիմայ
Պալթազար 5 ֆրանք. Բարի գալուտեան
առթիւ Տէր Փ. Ասատուրեան 1 ֆրանք
Վիճակահանութենէ պարգեւ շահելու
առթիւ Տալ Յովսէփ Խաթէճեան 10
ֆրանք. Ս. Աստուածածնայ տօնի առ-
թիւ Տեարք Գրիգոր Բալթազար 2
ֆր. Գ. Նահապետեան 1 ֆր. Մ Մկր-
տիչեան 2 ֆր. Յակոբ Թորալեան, 2
ֆր. Մկրտութեան առթիւ՝ տիարք Կ.
Յակոբեան, 1 ֆր. Գ. Յարութիւնեան,
1 ֆր. Վ. Գալիփեճեան 1 ֆր. Սիմոն
Պէշեան 1 ֆր. Պ. Պետրոսեան 1 ֆր.
Խ. Մարգարեան 1 ֆր. Գէորգ Անտէ-
ասեան 2 ֆր. Բակնետէր Իւթիւճեան,
1 ֆր. Թոմաս Իզմիրլեան, 1 ֆր. Շըր-
շուր զանձանակէ ձեռամբ Տեարք Ար-
տաշէս Ստեփանեանի, Հայկ Վարդա-
նեանի, 50 ֆր. 75 սնթ. Տրդատ Նշան-
եանի, 1 Լեոն Արքաճեանի 37 ֆր. 75
սնթ. Ստեփան Պալլադեանի. Միհ-
րան Զուպուգճեանի 59 ֆր 80 սնթ.
Զաքար Կիրակոսեան Մկրտիչ Բէրվան-
եանի 41 ֆր. 47 սնթ. Ղազարոս Աս-
լանեանի Մկրտիչ Բէրվանեանի 50 ֆր.
33 սնթ.

Ինչպէս յայտնի է պատուարժան
ազգայնոց, ընկերութիւնս յատուկ
քարոզի շինել տուած է Հարսանեաց
Շնորհաւորութեան համար. բաւական
ժամանակէ իվեր այս քարոզերը չեն
գործածուիր, հեռագրաւ շնորհաւորելը
աւելի նախապատիւ համարելով, որով
ընկերութիւնս զրկուած կըլլայ կարե-
ւոր հասոյթէ մը: Ուստի կը խնդրուի
պատուարժան ազգայիններէ՝ փոխա-
նակ հեռագրի՝ ընկերութեան քար-
ղով շնորհաւորել որուն գինը 50 սան-
թիմ է եւ կ'ը գտնուի հետեւեալ տե-
ղերը. Հայկական Գրատուն, Հայկական
ընթերցարան եւ «Բաբկէն-Սիւնի» ըն-
թերցարանը. նաեւ կրեթակ օրերը
ընկերութեանս գրասենեակը:

Կնիք Գործ. ժողովոյ:
Վառնա 3 Սեպտեմբեր 1907

ՄԱՆԿԱԳԱՐՏԷՁ

Մեր վարժարանին կից ման-
կապարտէզ մըն ալ հաստատելով
պիտի բանանք հոկտ. 1ին:

Ա. Ամիրխանեան

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԷՆ

Հասան մեզ մեծ քանակութեամբ նոր առնուած

ՀԱՅԵՐԼՆ ԿՐՈՄՈՅՈՒՆԻ ՓԼԱԳԱՆԵՐ

Փութացէք ապահովել Ձեզ վաճառումը այս նոր փառա-
ներու Ձեր նահանգին համար:

Մեր փառքաներու ցուցակները հայերէն, տաճկերէն եւ
զանազան եւրոպական եղանակներու կ'ուղարկենք ձեր փա-
փաքողաց:

Հեծելանիւի, կրամֆօնի եւ պէնզին լամպաներու վրայ
մի տաք ապացրանք ուրիշ տեղ նախ քան մեր ցուցակները
աչքէ անցնելը:

Ն. ԱԼԵԱՆԱԲ և ի. ԴԵՐՈՒՆԵԱՆ — ՌՈՒՄՃՈՒՔ
ԳՈՐԾԱՐԱՆ ՀԵՄԵԼԱՆԻՒԻ ՓՐՕԿՐԷՍ

ԱՏԼԻՅԵ ԻՍԼԱՅԱԹԸ

Պապը Ալի քենտի էլիէրի վասիթասը իւր պէօյիւկ տէվլէթ-լէրէ եէնի պիր նոթա կէօնտէ-րուպ, Մաքէթոնիանըն իւր վի-լայէթլէրինտէ իճրա իթմէքտէ օլտըղը ատլիյէ իսլահաթլարընա տայիր իյզահաթ վէ մալիմաթ վէրմիշ տիր, Պու իսլահաթլարըն պաշլըճասը շուշլար տըր, մահ-քէմէլէր իւզէրինէ իսլամ վէ խրիսթիան ատլիյէ միւֆէթիշ-լէրի թային իտէճէք, ֆազաթ շուրասըտէ վար տըր քի՝ ասըլ միւֆէթիշ իսլամ վէ մուալիմի խրիսթիան օլանաթ տըր, Սէլա-նիքտէ պիր հուգուգ մէքթէպի թէէսիս օլունաճագ, ատլիյէ մէ-մուրլարըն եարըսը իսլամ վէ եարըսը խրիսթիանլարտան օլա-ճագ տըր:

Մալիմ օլտըղը իւզրէ, թիւրք հիւքիմէթիւնին պու թէտպիրի էլիէրի թարաֆընտան հաղըր-լանմըլ օլան իսլահաթ ճէտվէլի-նի գուվլէթտէն տիւշիւրմէք ի-չիւն պիր բլան տըր, ֆազաթ թիւրք իշլէրինէ աշնա օլան էվ-րուրլըլար բէք էյի պիլիրքի՝ 20-25 սէնէլէրտէն պէրու թա-յին օլունմագտա օլան ատլիյէ միւֆէթիշլէրի նէ իշ կէօրէ պիլ-տիլէր վէ խրիսթիան մուալիմ-լէրին թէէսիւրի գաշ բարալըգ օլմուշ տըր:

Էվլէթ, վիլայէթլէրտէ պիզ խրիսթիան վալի մուալիմլէրինի տէ, մահքէմէ ազալարընտէ, բօլիս գօմիսէրլէրիտէ, զապթիյէ մէմուրլարընտէ պիլիրիդ, պուն-լարըն պիւթիւն վազիֆէսի վա-լինին, մահքէմէ բէյիսինին վէ ժանտարմա գօմանտանըն էմրի իւր մէօհիւր պաւմագտան իպա-րէթ օլմուշ տըր, արսի հալտէ ազլընտան գաթըընա գատար թէհլիքէ կէօլլէրի էօնիւնտէ տիր:

Էվլէթտէն շիմտիյէ գատար՝ տօղրուտան տօղրու Պապը Ալիտէն թային վէ անա մէսուլ օլան խրիսթիան մէմուրլարըն պիշա-րէլիկինի վէ Բարիդին 1856 ահտ-նամէսինտէն պէրու թիւրք իս-լահաթլընըն աճը աճը սէմէրէ-լէրինի կէօրմիւշ օլան ազըլ վէ ֆիրամէթ սահիպի օլանլարտան քի՝մլէր ինանաճագ վէ էմիլիյէթ իտէճէք Պապը Ալիինին շու եէնի իսլահաթ ճէտվէլինէ վէ նոթա-սընա:

— Էրզրումտա օգոստոս 26տա 2000 միւսլիման էհալի՝ քիւլի-յէթի պուզտայ ռահիպի օլան ի-քի թիւճարլարը (պիրի էրմէնի վէ տիկէրի միւսլիման) թու-թուպ, էքմէք ֆիաթընըն եիւք-սէլմէսինէ անլէրի սէպէպ ատտ իտէրէք, խըրըալմըլ վէ նիհա-յէթ էօլտիւրմիւշ վէ անլէրին լաշէլէրինի սիւրիտէրէք պիւ-թիւն չարսըլը կէզտիրմիշ տիր:

Հիտտէթլէնմիշ օլան էհալի պու-նունլէ տէ թէսքին օլընմայուպ, պաշգա գապահաթլըլար արա-մագտա ըմըլ:

— Թիւրքիստա պու սէնէ մա-լիյէճէ ֆէվզէլատէ սըգընթը վար տըր, վէրկիլէրին հասըլաթը հիշ մէսաֆէսինտէ տիր, զիրա մասուլ վիլայէթիւնտէն մատա հէր թարաֆտա մահուլաթ ֆէ-նա հալտէ տիր, էտիրնէ վիլա-յէթիւնտէ ասքէրլէր արթըրըմըլ վէ մէքուլաթ (ուտեսա) բահալան-մըլ օլմաղլէ պիր միլիոն իրա-տան զիյատէ աշըգ վար տըր, էրզրում վիլայէթիւնին աշըղը 800,000 լիւրտան զիյատէ, իշ-միր վիլայէթի տախի սէլլէր սէ-պէպի իւր մահուլաթընըն 100տէ 50սինի զայպ իթմիշ տիր, Հա-սըլաթ մէնպալարը քէսիւմիշ, ֆէնէրլէր իտարէսի, Տէօյէ Պանգ Անատուլ շըմէնտըֆէրին տէսի-սէսի իւր մաթլուպլարընա թէ-միւնաթ իսթէյօրլար Մալիյէ նա-ղըրը ավանա ալմըլ օլտըղը 250,000 լիւրայը պիլիրմէքտէ տիր, Ղայրը եէնի իսթիգրաղ իթմէք իշիւն թէմիւնաթ կէօս-թէրէճէք պիր շէյ գալմամըլ տըր, զիրա էն աղը 50 միլիոն ֆր. իսթիգրաղ իթմէկէ իգթի-զասը լապիթ տիր, Մահուլաթըն ֆէնաղըլը սէպէպիւնտէն շըմէն-տըֆէր թարիֆլէրի էնտիրի-միշ օլմաղլէ, շիրքէթէ քիւլմէթ-րօ հէսապըլիէ էօտէնէճէք 700000 լիւրա եէրինէ պէր միլիոն վէր-մէք իգթիզա իտէյօր պու տախի մալիյէ նէզարէթիւնին սըգըն-թընա պիր սէպէպ տիր:

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻԻԱ

Մէմուլ իտէրիզ քի՝ պէօյիւկ տէվլէթլէր Պապը Ալիինին պու եէնի ճանպարըղընա գաբըլուպ-տէ, քէնտիլէրին հաղըրլարտըլա-րը իսլահաթ ճէտվէլինտէն ասլա վազ կէլլէյէճէքլէր:

— Բուս էլլիսի Մ. Ջինովիէվ, Պապը Ալիտէն ատլիյէ իսլահաթը իշիւն աշնը մաալտա պիր նոթա գապուլ իթմիշ օլմաղլէ, անը թէտգըգ վէ միւզէքէրէ իթմէք խուսուսընտա՝ տիկէր էլիէրի սէֆարէթհանյէ տալէթ էյլէտի:

ՍթԱՆՊՈԼ Էթրաֆընտա վէ Տէ-տէ-Աղանտա հիւքիւմէթ պիր թազըմ բաթլայան էճզալար պուլմուշ տըր:

— Սէլամըգտան սօնրա Սուլ-թան ինկիլիզ, Ֆրանսըղ վէ Մ. Ամերիկա էլիէրինի հուզուրա գապուլ իթտի:

ՏԱԽԻԼԻԷ

Մաքէթոնիալը պուկարա-րըն Սօֆիատա շէնիքլէր էսնա:

սընտա իճրա իթտիքլէրի նիւ-մայիշաթընը եազըլըլտըգ, Մէզ-քիւր Մաքէթոնիալըլար թարա-ֆընտան պիր հէյէթ Կրանտիւք վիլատիլիին հուզուրընա գա-պուլ օլընարագ, քէնտի վաթան-լարընըն մազուսը վէ սէֆիլ հա-լինի իյզահ իտէն վէ գուրթուլ-մագ իշիւն իմտատ տիլէյէն, պիր արիզէ թագտիմ իթտի:

Կրանտիւք քէմալը տըգգաթլէ արիզէի տիլէտիքտէն սօնրա, ճէվապէն՝ սիզին արզուլըղա մու-վաֆաթ օլմագ իւմտի իլէ սապր իտին տէտի: Պու էսնատէ Ֆէիւ, Բրէնս Ֆէրտիւնանա վէ Կրանտիւք Անտրէ տախի հաղըր ըտըլար:

— Սօֆիատա պիր բուս քիլի-սէսինին թէմէլի աթըրտը:

— Ջար թարաֆընտան Պուլ-կար խարիճիէ նաղըրը Մ. Սթան-սիօֆա պըրլանթլար իլէ միւզէ-յէն պիր ալթուլն թապագա վէ մատամընա պիր ալթուլն գօրտօն հէտիյէ կէլմիշ տիր:

— Բուս ժէնէրալլարընը Վաւ-նայա կէթիւրէն Էրիքիք նամ բուս հարպ վարօրընըն զապիթ-լէրինէ բէայէթէն շէհրիմիզ պուկար զապիթլէրի տէնիզ պահ-չէսինտէ զիյաֆէթ քէշիտէ իթ-տիլէր, Բէզա Վարնա միւսղըմ-լարը բուս խիւղըմլարընա վէ նէֆէրլէրինէ իգրամէն պանգէթ վէրտիլէր:

ՄԻԻԹԵՆԷՎՎԻԷ

ԱԼԷՔՍԱՆՏՐԻԱՏԱՆ կէլէնլէր Սթանպուլտա 3 կիւն գարանթիւնա պէքլէյէճէքլէր:

— ԲՈՒՍԻԱՏԱ գօլէրա եայըլ-մագտա տըր, Հէլսէնկֆօրտա 3, Թոսքտա 16, Նիմիւն-նօլօրօտտա 146 քիշի թուլթուլմուշ, պուն-լարտան 53 ի էօլմիւշ տիրլէր:

— ԻՄԲԵՐԱՌՈՐ Վիլհէլմ ժէնէ-րալ Բօրաթքիւն (սապրգ բուս հարպիյէ նաղըրը վէ Մանչուրիա-տա մազլուպ օլտն բուս օրտուսը-նըն գօմանտանը) գրմըղը գա-րագըլ նիշանըն պէօյիւկ խաշը-նը վէ պիր գըլըճ վէրտի: Բէզա ժէնէրալ Մէշանքօյա, Վարչալիա վալիսի ժէնէրալ Սօյոնա, վէ Մօսկուա վալիսի ժէնէրալ Հէլ-չէլմանա գըլըճլար վէ նիշան-լար իհտա էյլէտի:

— ՄԱՐՈՒՔՏԱՆ ալընան հալա-տիսլէր թանճէրտէ վէ Բապոթտա սիւքիւնէթ հիւքմ իթտիլիւնի պիլտիրիյօրլար: Գապիլլէր ի-թաաթա կէլմէկտէ վէ սուլհ իս-թէմէքտէ տիրլէր:

ՄԱՍՆԱՌՈՐ ԴԱՍԵՐ

Տ. Հմայեակ Խուշպուլեան կը փախաքի մասնաւոր դասեր ըս-տանձնել հայերէնի և ֆրանսե-րէնի ֆափքառընըր ուղղակի ի-րեն դիմելու են:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. » [433 էջ] 2 ֆր. ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԳ անգամ տպագ-րուած եւ ճոխացած. Դին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-նէրու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատու-թէնէն առաջ. Դին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉՈՋԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեան-քէն: Չեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմեյ ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ո Ւ Ն Ք» ի խմբագ-րութեան

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ԶԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ վաւոն 100 քիւ. 18.50-20.40 Արապա 57-62 լիպ. 14. -16.40

ԱՐԲԱ վաւոն 100 քիւ. 15. -15.20 Արապա 45-52 լիպ. 8.40- 9.20 ԵՌԻՆԱՅ արապա 33-36 լիպ. 6. - 6.60 » 100 քիւ. 14. -14.20

ԶԱՎՏԱՐ արապա 52-57 լիպ. 12. -12.60 ՖԱՍՈՒԼԵՍ 100 քիւ. 20. -26.

ՏԱՐԸ արապա 9. -14.50 ԲՈԼՈՂ արապա 55-60 լիպ. 14. -15.10 ՄԻՍԻՐ Եօգ

Կիւնտէ վաւոն 20-25 վէ 250-300 արապա կէլմէքտէ, վաւոն մուամէ-լէսի նաբօլէօն 20 ֆր. արապա մու-ամէլէսի քէզա նաբօլէօն 20.

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա քիւղապընտա պագալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, Թիւրք ֆրանք իլէ:

ԳԱՀՎԷ 1.65- 2.20 ՇԷՔԷՐ Նէմցէ 89.

ՇԷՔԷՐ քէսմէլ սանտըգ 44.50 ԲԻՐԻՆՃ ճէնօվա շուվալը 45.50

» Ֆիլիպէ » 45. » Ինկիլիզ » 34.

Բիզօ » 50. ԿԱՂ Սանտըղը 10.80

ՉԷՅԹԻՆ Խաղը քիւ. 1.25- 1.35 ԳՈՒՐՈՒ Իւզիւմ 40.

ԵՆԱՌԱՐԹ 100 տաթթի 5.60

ԻՇ ԱՐԱՅԱՆԱՐԱ

Գո. րո-Բուսար գազապընտա թուրք-ճըլար. քէօյի նաթ միւթէվէֆա թա-ղէոս աղա Պօղոսեանըն մալիաֆաթուրա վէլպագալիյէ տի, քիւնը վէ տէրուլին-տէթի 10,000 ֆրանգա եազըն զըլմէթ-տէ օլան մալլէր սաթըլաճագ տըր: Թալիպլէսինէ ետլընըլ մալլէրի սա-թուպ, տիւքեանը քիրա իլէ տախի վէրիլէ պիլէճէք տիր:

Մէգքիւր տիւքեան քէք իշլէք վէ միւլթէրիսի եէրիստէ օլտըղընտան հա-ղը պիր իշլ արգուլէլ օլանլար պու-ֆըրսաթտան իսթիֆատէ իտէպիլլիլլէր:

Շու ատրէսէ միւրաճաթթ օլունմալը Մատամ Մանիկ թ. Պօղոսեան օգոլիա Գո. րո Բուսար Սէլօ Թուրքըլար

Издатель: Д-ръ М. Торосианъ

печатница Д. Тодоровъ С-не — Варна